МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ.Հ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

31 Հոկտեմբեր, 2025

«ԱՔՍԵԼ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՐՇԱԿ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ
(ՀՎՀՀ՝ 02918838,,
հասցե՝ «ՀՀ, ք. Երևան, Թումանյան 8,»,
էլ.փոստ՝ «am.llc24@mail.ru»)

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2025 թվականի փետրվարի 21-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է կահույքի ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/59» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «Աքսել» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 02918838, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2-րդ նիստի արձանագրության 9-րդ կետով Ընկերությունը Ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 2025 թվականի ապրիլի 7-ին ԵՊՀ և Ընկերության միջև կնքվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/59-1» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Կնքված Պայմանագրի մատակարարման ժամանակացույցի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրի կնքման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարում իրականացնել, սակայն Պայմանագրով նախատեսված գնման առարկայի պատշաճ մատակարարում մինչ օրս չի իրականացվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն «գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը», իսկ 2.1.7.1 կետի ա) ենթակետի համաձայն, վաճառողի կողմից

պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե «մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում», ինչպես նաև բ) ենթակետի համաձայն, «եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի»:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե «**խախտել է պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը **հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և **մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը**», ուստի Ընկերությունը Ընթացակարգի շրջանակներում ներկայացրած ապահովումները վճարելու պարագայում վերոնշյալ ցուցակում չի ընդգրկվի:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ԵՊՀ-ն որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով Պայմանագիրն 1-ին չափաբաժնի մասով ամբողջությամբ միակողմանի լուծել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ,
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ **Ռ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ**

Կատ.՝ Գնումների կազմակերպման վարչություն
Հեռ.՝ 060 71 00 10